

15.11.2022

ԿԲ խորհրդի նիստում

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նոյեմբերի 15-ի նիստում փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում և «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգը հաստատելու» որոշման մեջ:

Ուժը կորցրած են ճանաչվել «ԱՍ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ-ի գրավատնային գործունեության թիվ ԳԳ-Ե 305 և «ՄՈՐՎԻԿ» ՍՊԸ-ի գրավատնային գործունեության թիվ ԳԳ-Ե 326 լիցենզիաները, «Դանիելյան» ՍՊԸ-ին (լիցենզիա թիվ 753) փոխանակման կետին մասնաճյուղի լիցենզիա է տրամադրվել, «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-ին նոր դասով ապահովագրական գործունեության լիցենզիա է տրամադրվել, վերաձևակերպվել է ընկերության ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիան:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

հեռախոս. (010) 592592-0702

էլ-փոստ. mcba@cba.am

www.cba.am